13. Սույն կանոնակարգով նախատեսված բացակայության տևողությունը է համարվում փաստացի բացակայած ժամանակահատվածը:

14. Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմում վարվում է աշխատակազմի աշխատողների աշխատանքի հաճախումների հաշվառման մատյան (տարեկ): Աշխատակազմի աշխատողները ստորագրում են աշխատանքի հաճախումների հաշվառման մատյանում՝ աշխատանքի վայր ներկայանալիս:

15. Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը աշխատողների անմիջական դեկավարները Աշխատակազմի քարտուղարին գրավոր փաստաթուղթ են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում իրենց ենթակա աշխատողների կողմից սույն կանոնակարգի պահանջների խախտման, այդ թվում նաև՝ հարգելի և անհարգելի բացակայությունների դեպքերի վերաբերյալ:

16. Աշխատակազմի աշխատողին ամենամյա արձակուրդ է տրվում <<աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:
17. Աշխատակազմի աշխատողին ամենամյա արձակուրդը տրամադրվում է հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:
- Ամենամյա նվազագույն արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում:
- Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:
18. Համայնքի ղեկավարին, համայնքի ղեկավարի տեղակալին, խորհրդականին, օգնականին և համայնքային ծառայողներին տրամադրվում է ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 4 /չորս/ աշխատանքային օր տևողությամբ :
19. Ամենամյա լրացուցիչ արձակուրդը միացվում է ամենամյա նվազագույն արձակուրդին և կարող է տրամադրվել դրա հետ կամ առանձին:
- 19.1 Ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով՝ 4 /չորս/, 10 /տաս/, 12 /տասներկու/, 14 /տասնչորս/, 20 /քսան/ և 24 /քսանչորս/ աշխատանքային օր տևողությամբ:
20. Ամենամյա արձակուրդ տրամադրելու հերթականությունը (նախնական հաստատված գրաֆիկ) աշխատողի անմիջական ղեկավարի առաջարկության հիման վրա սահմանում է աշխատողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ մինչև ընթացիկ տարվա հունվարի 15-ը: Արձակուրդի հերթականությունը սահմանելիս և արձակուրդ տրամադրելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի պահանջները, աշխատողի ցանկությունը և Աշխատակազմի աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունը:
21. Արձակուրդ տրամադրելու վերաբերյալ դիմումը (Ձև 1) աշխատողն անմիջական ղեկավարի նշագրումով ներկայացնում է իրեն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:
22. Աշխատակազմի աշխատողին արձակուրդ տրամադրվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի իրավական ակտով: Ամենամյա արձակուրդից հետ կանչելը թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ՝ օրենքով սահմանված ղեպքերում:

23. Եթե աշխատողը գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում՝ մինչև ամենամյա արձակուրդն սկսվելը, աշխատողի և աշխատողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը տեղափոխվում է այլ ժամանակ։ Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է ամենամյա արձակուրդի ընթացքում, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է համապատասխան օրերի քանակով։

24. Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունվելու նպատակով քննություններին նախապատրաստվելու համար աշխատողներին տրամադրվում արձակուրդ՝ յուրաքանչյուր քննության համար 3 /երեք/ աշխատանքային օր։ Ուսումնական հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝

1) ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր քննության համար՝ երեք աշխատանքային օր։

2) ստուգարքներին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգարքի համար՝ երկու աշխատանքային օր։

3) լաբորատոր աշխատանքների կատարման համար՝ ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով։

4) երեսուն աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար՝ տասնհինգ աշխատանքային օր։

5) պետական (ավարտական) յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար՝ վեց աշխատանքային օր։

25. Հերթական և ուսումնական արձակուրդների համընկնման դեպքում աշխատողի և նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համաձայնությամբ հերթական արձակուրդը տեղափոխվում է այլ ժամանակ։

26. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն, ընտանեկան հանգամանքներից և այլ հարգելի պատճառներից ելնելով՝ Աշխատակազմի աշխատողը, իր անմիջական ղեկավարի համաձայնության դեպքում, կարող է դիմել իրեն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ չվճարվող արձակուրդ տրամադրելու համար (1տարվա ընթացքում ոչ ավելի, քան 30 օր տևողությամբ), որը ծնակերպվում է իրավական ակտով։

27. Ամենամյա հերթական, լրացուցիչ, նպատակային արձակուրդներ տրամադրելու և դրանց հետ կապված՝ սույն կանոնակարգով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

III. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

28. Աշխատակազմի ղեկավարությունը (համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի տեղակալը, Աշխատակազմի քարտուղարը) աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, իր լիազորությունների սահմաններում պարտավոր է՝

- 1) Աշխատակազմի աշխատողների համար ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների ճշգրիտ և ժամանակին կատարման, ինչպես նաև նրանց ներկայացվող սահմանափակումների պահպանման համար անհրաժեշտ երաշխիքներ.
- 2) աշխատողներին ապահովել համապատասխան աշխատանքով, նրանց ծանոթացնել աշխատանքային պայմաններին, ճշտորեն և պատշաճ կազմակերպել աշխատանքների կատարումը.
- 3) աշխատողների համար իրենց ծառայողական (աշխատանքային) պարտականությունների կատարման և լիազորությունների իրականացման նպատակով ապահովել անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մյուս սոցիալական երաշխիքների, սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովության իրականացումը.
- 4) ապահովել Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ գրադեցնող համայնքային ծառայողների առանց խտրականության հավասար պաշտոնային դրույթաչափի իրավունքը.
- 5) աշխատողներին չտալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող, ինչպես նաև հանձնարարականներ տվողի և կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ,
- 6) աշխատողներին ծանոթացնել գործավարության կարգի, անվտանգության տեխնիկայի կանոնների, սույն ներքին աշխատանքային կարգապահական կանոնների հետ, ինչպես նաև ապահովել դրանց կատարումը.

- 7) ապահովել աշխատողներին առաջին բուժօգնություն ցույց տալը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում բուժիմնարկություն տեղափոխելը,
- 8)ժամանակին արձագանքել աշխատողների աշխատանքային կարիքներին ու պահանջներին, բարելավել նրանց աշխատանքի պայմանները,
- 9) ապահովել սույն ներքին կանոնների պահանջների անշեղորեն կատարումը և ժամանակին արձագանքել դրանց խախտումներին,
- 10) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված այլ պարտականություններ:

29. Սույն կանոնակարգի 28-րդ կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

30. Աշխատակազմի ղեկավարությունն ունի նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

31. Աշխատակազմի համայնքային ծառայողը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում պարտավոր է իր անմիջական ղեկավարին ներկայացնել հաշվետվություն տվյալ կիսամյակում իր կատարած աշխատանքների մասին, որի վերաբերյալ անմիջական ղեկավարը ենօրյա ժամկետում պարտավոր է տալ եզրակացություն:

32. Աշխատակազմի աշխատողը աշխատանքային կարգապահության պահպանման մասով պարտավոր է՝

1) պահպանել <<Սահմանադրության, օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի քարտուղարի հրամանների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև ժամանակին ու ճշգրիտ կատարել դրանցով սահմանված իիմնական, ծառայողական (աշխատանքային) պարտականությունները և լիազորությունները, պահպանել դրանցով նախատեսված սահմանափակումները.

2) ժամանակին և պատշաճ կատարել իր անմիջական ղեկավարի՝ սահմանված կարգով, իր լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականները.

3) ժամանակին և պատշաճ կատարել Աշխատակազմի գործավարության կարգի, անվտանգության տեխնիկայի կանոնների, սույն կանոնակարգի պահանջները.

4) ինամքով վերաբերվել ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարման նպատակով հատկացված տեխնիկական և մյուս նյութական միջոցներին, ճիշտ և նպատակային օգտագործել դրանք.

5) աշխատանքի վայրում պահպանել անվտանգության տեխնիկայի, էեկտրաէներգիայի օգտագործման, հակահրեհեային կանոնների պահանջները.

6) աշխատանքի ժամերին մշտապես գտնվել աշխատանքի վայրում կամ ծառայողական (աշխատանքային) անհրաժեշտությունից ելնելով մեկնած մյուս վայրերում և առանց ծառայողական անհրաժեշտության կամ անհարգելի պատճառներով չբացակայել այդ վայրից.

7) աշխատանքի վայրում աշխատանքային ժամերին, առանց ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների իրականացման անհրաժեշտության, չբացակայել աշխատատեղից.

8) աշխատասենյակում պահպանել կարգուկանոն.

9) ծառայողական (աշխատանքային) պարտականությունների կատարման և լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ մեկնել գործուղման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

10) աշխատասենյակում պահպանել կարգուկանոն, չծխել, չաղմկել,

11) քաղաքացիների հետ շփումներում դրսնորել բարեկիրթ, գուապ և համբերատար վարքագիծ,

12) պահպանել և կատարել սույն կանոնակարգի մյուս դրույթների պահանջները:

33. Սույն կանոնակարգի 32-րդ կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

34. Աշխատակազմի աշխատողն ունի նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված այլ պարտականություններ:

35. Աշխատակազմի աշխատողներին, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, արգելվում է՝ աշխատանքային ժամերին գրաղվել իր ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների հետ չկապված ցանկացած այլ գործունեությամբ, բացառությամբ օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև սույն կանոնակարգով սահմանված դեպքերի.

36. Աշխատակազմի աշխատողներին, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, արգելվում է.

- 1) աշխատանքային ժամերին կամ աշխատատեղում օգտագործել ոգելից խմիչքներ կամ աշխատանքի ներկայանալ ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում.
 - 2) աշխատանքային ժամերին գրաղվել իր պաշտոնեական (աշխատանքային) պարտականությունների և ծառայողական լիազորությունների հետ չկապված ցանկացած այլ գործունեությամբ, բացառությամբ Օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի.
 - 3) առանց ծառայողական անհրաժեշտության՝ օգտվել ծառայողական հեռախոսների միջքաղաքային կամ բջջային հեռախոսակապերից, ինչպես նաև կապի մյուս միջոցներից,
 - 4) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել ծառայողական նպատակներով հատկացված տեխնիկական և մյուս նյութական միջոցները,
 - 5) դրսևորել հասարակության կողմից անընդունելի այնպիսի վարքագիծ, որը կարող է խոչընդունել ամենօրյա աշխատանքային բնականոն գործունեության ընթացքին,
 - 6) պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված ընդունել նվերներ կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալ: Թույլատրելի նվերների տեսակները սահմանված են <<Հանրային ծառայության մասին>> <<օրենքի 29-րդ հոդվածով:
37. Աշխատակազմի աշխատողներին կարող են ներկայացվել նաև աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված իրավական ակտերով, ինչպես նաև սույն ներքին կանոններով նախատեսված այլ սահմանափակումներ:

IV. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ

36. Աշխատակազմի աշխատողները և համայնքային ծառայողները ենթակա են խրախուսանքի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային և <<Համայնքային ծառայության մասին>> օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով:
37. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գործատուն կարող է խրախուսել աշխատողներին: Աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները

- 1) շնորհակալության հայտարարում.
- 2) միանվագ դրամական պարզեցում.
- 3) հուշանվերով պարզեցում.
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
- 5) կարգապահական տույժի հանում:

38. <<Համայնքային ծառայության մասին>> <<օրենքի 31-րդ հոդված 1-ին մասի դրույթներով՝ երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները որակյալ կատարելու համար համայնքային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները

- 1) շնորհակալության հայտարարում.
- 2) միանվագ դրամական պարզեցում.
- 3) հուշանվերով պարզեցում.
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
- 5) կարգապահական տույժի հանում:

39. Համայնքային ծառայողի նկատմամբ խրախուսանքները կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

40. Աշխատանքային կարգապահության խախտումներ թույլ տալու դեպքում Աշխատակազմի աշխատողներն ենթակա են կարգապահական տույժի:

41. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: Կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

42. Սույն կանոնակարգի ցանկացած պահանջի խախտումը՝ որպես կարգապահության խախտում, հանգեցնում է Աշխատակազմի համայնքային ծառայողների համար՝ Օրենքով, Աշխատակազմի մյուս աշխատողների համար՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական պատասխանատվության:

43. Աշխատակազմի համայնքային ծառայողների համար՝ Օրենքով, Աշխատակազմի մյուս աշխատողների համար՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով չնախատեսված կարգապահական տույժի կիրառումն արգելվում է:
44. Աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ կիրառվում են Օրենքով նախատեսված, իսկ Աշխատակազմի մյուս աշխատողների նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժերը:
45. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.
- 1) Նկատողություն.
 - 2) Խիստ նկատողություն.
 - 3) համայնքային ծառայության առավելագույն դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով:
 - 4) Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:
 - 5) զբաղեցրած պաշտոնից ազատում:
46. Եթե համայնքային ծառայողը իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նրա նկատմամբ կիրառված կարգապահական տույժը համարվում է հանված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը՝ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <> կետով նախատեսված խրախուսանքի տեսակի կիրառման միջոցով, եթե համայնքային ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ ծառայող: Միաժամանակ կարող է հանվել Աշխատակազմի աշխատողի նկատմամբ նշանակված միայն մեկ կարգապահական տույժ:
47. Սույն կանոնակարգի 45-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, ենթակտերով նախատեսված կարգապահական տույժերը համայնքային ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, իսկ 3-րդ ենթակտով նախատեսված կարգապահական տույժը՝ համապատասխան ավելի բարձր դասային աստիճան շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

48. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրավել առանց բացատրության:

49. Կարգապահական տույժերը Աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ կիրառվում, ինչպես նաև դրանց հետ կապված հարցերը կարգավորվում են՝ Օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի <<Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին>> N 1003-Ն որոշմամբ հաստատված կարգով և սույն կանոնակարգով սահմանված դեպքերում և կարգով. իսկ Աշխատակազմի մյուս աշխատողների նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և սույն կանոնակարգով սահմանված դեպքերում և կարգով:

50. Աշխատակազմի մյուս աշխատողների նկատմամբ կարգապահական տույժերը կիրառվում են նրանց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի իրավական ակտով:

51. Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնելն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը: Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

52. Միևնույն կարգապահական խախտումը մեկից ավելի աշխատողների կողմից կատարվելու դեպքում յուրաքանչյուր աշխատողի վերաբերյալ տրվում է կարգապահական տույժ նշանակելու մասին առանձին իրավական ակտ:

53. Կարգապահական տույժ կիրառելն Աշխատակազմի աշխատողին չի ազատում համապատասխան իրավական ակտերով սահմանված իր ծառայողական (աշխատանքային) պարտականությունների և լիազորությունների կատարումից, որոնք չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև վերազանցելու համար աշխատողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

54. Կարգապահական տույժ կիրառելը Աշխատակազմի աշխատողին չի ազատում օրենքով նախատեսված պատասխանատվության մյուս տեսակներից:

55.1 Կարգապահական տույժը կարող է կիրավել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

2. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է առողջության գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան երկու տարի:

3. Կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված:

5. Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխորորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

56. Աշխատակազմի աշխատողի նկատմամբ մեկ տարվա ընթացքում մեկից ավելի կարգապահական տույժեր նշանակված լինելու դեպքում մինչև յուրաքանչյուր տույժի համար հաշվարկվող մեկ տարին լրանալը, Օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, սկզբում կարող է հանվել վերջին կարգապահական տույժը: Նման դեպքերում նախորդ կարգապահական տույժը պահպանում է իր ուժը՝ մինչև Օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված մեկ տարվա ժամկետը լրանալը կամ նախքան այդ ժամկետը լրանալը՝ կարգապահական տույժը սահմանված կարգով հանելը:

57. Կարգապահական տույժ նշանակելու մասին իրավական ակտը համայնքային ծառայողները կարող են բողոքարկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի հունիսի 13-ի <<Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին>> N 1003-Ն որոշմամբ սահմանված կարգով, իսկ մյուս աշխատողները՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

44. Աշխատանքի ներկայանալիս տղամարդիկ հագնում են դասական (գործնական) ոճի կոստյում բաց կամ մուգ երանգի վերնաշապիկով, դասական (գործնական) ոճի կոշիկներով: Աշխատանքի են ներկայանում սափրված, խնամված:

45. Կանայք հագնում են դասական (գործնական) ոճի, մեղմ երանգի հագուստ (ցանկալի է՝ կոստյում): Աշխատանքի չեն կարող ներկայանալ սպորտային, երեկոյան, տոնական, փայլուն, խայտաբղետ գործվածքներից կարված հագուստով, չափից ավելի կարճ զգեստներով, սպորտային կոշիկներով, ճացող դիմահարդարումով, զարդերով, ոչ կոկիկ սանրվածքով:

Պաշտոնատար անձի գրադեցրած պաշտոնը

ին
անունը, ազգանունը

դիմումատոի գրադեցրած պաշտոնը

ից
անունը, ազգանունը

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ տրամադրել 20 _____թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն (և լրացուցիչ) արծակուրող (ները) ս.թ. _____ի _____ից:

Դիմում՝

ազգանուն

ստորագրություն

20 թ.

Տվյալներ դիմումատոի անմիջական դեկավարի
նշագրումների վերաբերյալ:

Նշագրման բովանդակությունը

դիմումատոի անմիջական դեկավարի պաշտոնը

անունը, ազգանունը

ստորագրություն

Պաշտոնատար անձի գրադարան պաշտոնը

—ին
անունը, ազգանունը

ղիմումատուի գրադարան պաշտոնը

—ից
անունը, ազգանունը

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ 20 թ. — ի — ից մինչև 20 թ. — ի — ը
տրամադրել արձակուրդ՝ առանց աշխատավարձի պահպանման:
Արձակուրդ տրամադրելու պատճառը —

Ղիմու՛
ազգանուն

ստորագրություն

20 թ.

Տվյալներ ղիմումատուի անմիջական ղեկավարի
նշագրումների վերաբերյալ:

Նշագրման բովանդակությունը

Ղիմումատուի անմիջական ղեկավարի պաշտոնը

անունը, ազգանունը

ստորագրություն

ի 20 թ.

գեկուցագիրը ներկայացվող պաշտոնատար
անձի գրադեցրած պաշտոնը

-ին
անունը, ազգանունը

գեկուցողի գրադեցրած պաշտոնը

-ից
անունը, ազգանունը

ՀԵԿՈՒՑԱԳԻՐ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ _____ -ի համաձայնությամբ (անմիջական դեկավարի
պաշտոնը և անուն ազգանունը) _____ պատճառով (բացակայելու
պատճառը) 20 ____ թվականի ժամը ____ -ից մինչև ____ -ը բացակայելու եմ աշխատանքից:
Խնդրում եմ բացակայությունս համարել հարգելի:

Դիմող՝ _____

ազգանուն

ստորագրություն

20 թ.

Տվյալներ գեկուցողի անմիջական դեկավարի
նշագրումների վերաբերյալ:

Նշագրման բովանդակությունը

Դիմումատուի անմիջական դեկավարի պաշտոնը

անունը, ազգանունը

ստորագրություն

-ի 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՖԵՐԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ



Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ֆերիկ, Կոմիտասի 6
Հեռ.՝ 093147222
Էլ. Փոստ՝ ferik.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
08 դեկտեմբերի 2023թվականի N 18-Ա

ՀԱՅՑ ՀԱՄԱՐԱՆԻԾ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ոեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի N-2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ֆերիկ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 22-ի Հասցե համարանիշ տրամադրելու մասին՝ թիվ 5 որոշումը, Ֆերիկ համայնքի բնակիչ Ռուստամ Զամայի Մամյանի դիմումը

Որոշում եմ

- Ֆերիկ համայնքում Ռուստամ Զամայի Մամյանի տնամերձ հողամասին և բնակելի տան /ծածկագիր՝ 04-097-0003-0004/ տալ հասցե համարանիշ 5:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրային պետական կոմիտեի պետական գրանցման համար:
- 01.12.2023թվականի թիվ 16-Առողջումն համարելու օրը կորցրած և հիմք ընդունելով նոր որոշումն
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի դեկավար՝

Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶ ՖԵՐԻԿ
ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ



Տաղավար՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ֆերիկ, Կոմիտասի 6
Հեռ.՝ 093147222
Էլ. Փոստ՝ ferik.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
15 դեկտեմբերի 2023թվականի N 19-Ա

ՀԱՅՑ ՀԱՄԱՐԱՆՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ-ի ղեկտեմբերի 29-ի N-2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, իհմք ընդունելով Ֆերիկ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 22-ի Հասցե համարանիշ տրամադրելու մասին՝ թիվ 5 պահանջումը, Ֆերիկ համայնքի բնակիչ Մահմուդ Ասկյարի Սադոյանի դիմումը

Որոշում են

1. Ֆերիկ համայնքում Մահմուդ Ասկյարի Սադոյանի տևամերձ հողամասին և բնակելի տան /ծածկագիր՝ 04-097-0003-0003/ տայ հասցե համարանիշ՝ 7:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրային պետական կոմիտեի պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Բ. Հասանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

28.12.2023թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 20-Ա

**ԲՆԱԿԵԼԻՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱԽԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԳՈՒՅՔԸՆԹԻ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հոդամասը ընդորևակած չէ Հայաստանի Հանրապետության հոդային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցները չեն հակառակ բաղարաշինական նորմերը - և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում - և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչը ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի բնակիչ Ռոստամ Զամարի Մամոյանը դիմել է Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի 5 հասցեում գտնվող իրեն պատկանող /ըստ հոդային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 08.03.1991թ. թիվ 1 որոշման/ 0.1 հա օրինական և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Զորավար Անդրանիկ փողոցի 5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ բաղաքացի Ռոստամ Զամարի Մամոյանը /ծնված 13.03.1958թ./, գույքային իրավունքը ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.1 հա հոդամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԿԿ ՊՎԿ սարգերը սրավորված ստորաբաժանաւը գրասցել Ինստան Զամարի Մամոյանը /ծնված 13.03.1958թ./, սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վերայական:

4.Բնակելի տանը տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 5 բնակելի տուն:

5.Ուժը կորցրած համարել՝ Ֆերիկ համայնքի դեկանարի 20.11.2023թվականի թիվ 13-Ա որոշումը և հիմք ընդունել նոր որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնդունման պահից:

Համայնքի դեկանար



Ռ. Հասանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔ

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Ֆերիկ համայնք
tլ. Փոստ՝ ferik_gp@mail.ru

28.12.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ ՄՆ21-Ա

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 1 ՀԱՆԳՈՒՅՑԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՅՅՈՒԹՅՈՒՆԻ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ֆերիկ համայնքի Ավագանու 2022թվականի մարտի 25-ի թիվ 12 որոշումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ֆերիկ համայնքի 2023 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից 50.000/հիսուն հազար/ՀՀ դրամ Ֆերիկ համայնքի թվով 1/մեկ/հանգույցալի ընտանիքի ֆինանսական աջակցություն տրամադրել՝ համաձայն կից ցուցակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ. ՀԱՍԱՆՅԱՆ



ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ

համայնքի ղեկավարի 2023թվականի

դեկտեմբերի 28-ի թիվ 21-Ա որոշման



ՑՈՒՑԱԿ

N	Ազգանուն,անուն,հայրանուն	Անձը հաստատող փաստաթուղթ	Գումար ՀՀ դրամ
1	Սադոյան Քամլ Ասկարի	AU0525612	50.000